# ՏԵՂԵԿԱԳԻՐ 2014 NEWSLETTER

Հուլիս-դեկտեմբեր/Julay-December



## ԱՎՍՏՐԻԱՅԻ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ ՍԵԲԱՍՏԻԱՆ ԿՈՒՐՑԻ ԳԼԽԱՎՈՐԱԾ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅՈՒՆՆ ԱՅՑԵԼԵՑ ՀԱՅԿԱԿԱՆ ԿԱՐՄԻՐ ԽԱՉԻ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

Սեպտեմբերի 8-ին, Հայկական Կարմիր խաչի ընկերություն այցելեց Հայաստանում պաշտոնական այցով գտնվող Ավստրիայի արտաքին գործերի նախարար Սեբաստիան Կուրցի գլխավորած պատվիրակությունը, որի կազմում էին Ավստրիայի արտգործնախարարության պաշտոնյաներ, Ավստրիայի զարգացման գործակալության գլխավոր տնօրեն Մարտին Լեդոլտերը, Ավստրիայի Զարգացման Համագործակցության գործառնությունների բաժնի և ավստրիական ԶԼՄ-ների ներկայացուցիչներ:

Այցի նպատակն էր տեղում ծանոթանալ Հայկական Կարմիր խաչի ընկերության կողմից՝ Ավստրիական զարգացման գործակալության և Ավստրիական Կարմիր խաչի օժանդակությամբ իրականացվող սիրիահայերի աջակցությանն ուղղված ծրագրային գործունեությանը, մոտեցումներին և արդյունքներին:

Բարձրաստիճան հյուրերին ողջունեց ՀԿԽԸ նախագահ Մխիթար Մնացականյանը:

Ավստրիայի արտգործնախարար Սեբաստիան Կուրցը մասնավորապես ասաց.

- Երախտապարտ եմ այս հնարավորության համար, որ կարող եմ տեղում ծանոթանալ մեր աջակցությամբ իրականացվող ծրագրերին: Կուզենայի տեղեկացնել, որ մեր օժանդակությունը շարունակական կլինի, քանի որ մենք տեսնում ենք իրականացված ծրագրերի արդյունքը:

Այնուհետև, Աղետների կառավարման և բնակչության տեղաշարժի բաժնի վարիչ Էդմոն Ազարյանը ներկայացրեց "Աջակցություն սիրիահայերին" ծրագիրը, որի շրջանակներում 300 սիրիահայ ընտանիք 2013 թվականի հոկտեմբերից 2014 թվականի հունիս ամիսների ընթացքում օգնություն է ստացել, այդ թվում՝ տաք հագուստ, հիգիենիկ պարագաներ, դեղորայք և, սեփական գործ սկսելու համար, գործիքներ ու սարքավորումներ:

Արտգործնախարար Սեբաստիան Կուրցը շփվեց նաև ծրագրի շահառուների՝ սիրիահայերի հետ, լսեց նրանց կարծիքը, տպավորություններն ու առաջարկները: Հանդիպման վերջում արտգործնախարարը նրանց խորհրդանշական նվերներ հանձնեց:

## ԱՐԱՐԱՏԻ ԼՈՒՍԱՌԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԸ ՆՈՐ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐԻՆ ԴԻՄԱՎՈՐԵՑԻՆ ՀԱՅԿԱԿԱՆ ԿԱՐՄԻՐ ԽԱՉԻ ԿՈՂՄԻՑ ՎԵՐԱՆՈՐՈԳՎԱԾ ԴՊՐՈՑՈՒՄ

Սեպտեմբերի 4-ին, տեղի ունեցավ Արարատի մարզի Լուսառատ համայնքի դպրոցի՝ Հայկական Կարմիր խաչի ընկերության կողմից վերանորոգված երկրորդ հարկի բացման արարողությունը:

Միջոցառմանը ներկա էին ՀՀ Արարատի մարզպետ Ռուբիկ Աբրահամյանը, Հայաստանում Ճապոնիայի դեսպանատան առաջին քարտուղար Կեիսուկե Յամագիշին և ՀԿԽԸ նախագահ Մխիթար Մնացականյանը:



## AUSTRIAN DELEGATION HEADED BY THE FOREIGN MINISTER SEBASTIAN KURZ VISITED ARCS

On 8 September, at 14:30 p.m., Austrian Delegation headed by the Foreign Minister Sebastian Kurz visited the Armenian Red Cross Society Headquarters during his official visit to Armenia. The delegation comprised Austrian Foreign Affairs Ministry officials, Martin Ledolter, Managing Director of the Austrian Development Agency, the operational unit of the Austrian Development Cooperation and Austrian media representatives.

The aim of the visit was to get acquainted on site with activities implemented by the Armenian Red Cross Society with funding support from the Austrian Development Cooperation and Austrian Red Cross directed to the assistance to Syrian Armenians, its approaches and results.

Mkhitar Mnatsakanyan, ARCS President welcomed the high officials. Austrian Foreign Minister Sebastian Kurtz said:

"I am grateful for this opportunity to get acquainted with the projects, we support. I would like to inform you, that we will continue our support, as we see the results of the implemented projects".

Then, Edmon Azaryan, Head of Disaster Management and Population Movement department, presented "Relief and Empowerment for Syrian Armenians" project, in the frame of which in the period of October 2013 to June 2014, 300 Syrian families received aid, including warm clothing, hygiene supplies, medicines, tools and equipment to start their own business.

Foreign Minister Sebastian Kurtz talked also with the project beneficiaries – Syrian Armenians, listened to their opinions, impressions and recommendations. At the end of the meeting, Foreign Minister handed them symbolic gifts.

## PUPILS OF LUSARAT COMMUNITY, ARARAT REGION STARTED NEW ACADEMIC YEAR IN THE SCHOOL, RENOVATED BY ARMENIAN RED CROSS SOCIETY

On 4 September, in the Ararat region Lusarat Community School, the opening ceremony of the second floor was held. The school was renovated by Armenian Red Cross Society. The event was attended by Ararat region Governor Roobik Abrahamyan, First Secretary of the Embassy of Japan Keisuke Yamagishi and ARCS President Mkhitar Mnatsakanyan.

Thanks to the initiative of ARCS, in 2014 - 2015 academic year, 300 pupils of Lusarat border community have the opportunity to get education in improved and modern conditions. Interior decoration and furnishing of the school building was implemented by grant of Japanese government.



ՀԿԽԸ նախաձեռնության շնորհիվ սահմանամերձ Լուսառատ համայնքի 300 դպրոցականներն 2014 - 2015 թթ. ուսումնական տարում արդեն հնարավորություն ունեն կրթություն ստանալու բարեկարգ և ժամանակակից պայմաններում: Դպրոցի շենքի ներքին հարդարման և կահավորման աշխատանքներն իրականացվել են Ճապոնիայի կառավարության տրամադրած դրամաշնորհի միջոցով:

Հայաստանում Ճապոնիայի դեսպանատան առաջին քարտուղար Կեիսուկե Յամագիշին բարձր գնահատեց կատարված աշխատանքը՝ նշելով վերանորոգման և կահարվորման որակը.

- ճապոնիայի կառավարության անունից շնորհավորում եմ նոր ուսումնական տարին նոր շենքում դիմավորելու կապակցությամբ: Ճապոնիայի կառավարությունը շարունակում է իրականացանել սոցիալ- տնտեսական զարգացման ծրագրերը ինչը ավելի կամրապնդի Հայաստանի և Ճապոնիայի բարեկամությունը:

Երեխաները հյուրերին ողջունեցին հայկական երգ ու պարով, ասմունքով, հնչեցին նաև ճապոներեն մաղթանքներ ու շնորհակալական խոսքեր:

Եզրափակելով բացման պաշտոնական մասը Արարատի մարզպետ Ռուբիկ Աբրահամյանը շնորհակալություն հայտնեց բարերարներին՝ շեշտելով.

- Կրթական օջախները հայ ազգի համար ունեն ռազմավարական նշանակություն, նրանք մեր պետականության հենասյուներն են: Որքան կիրթ սերունդ՝ այնքան ամուր պետականություն:

## ՀԱՅԿԱԿԱՆ ԿԱՐՄԻՐ ԽԱՉԻ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԷՐ ԱՎՍՏՐԻԱԿԱՆ ԿԱՐՄԻՐ ԽԱՉԻ ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ ՎԵՐՆԵՐ ԿԵՐՇԲԱՈՒՄԸ

Սեպտեմբերի 8-ին Հայկական Կարմիր խաչի գլխավոր գրասենյակում էր Ավստրիայի Կարմիր խաչի գլխավոր քարտուղար Վերներ Կերշբաումը, որին հանդիպեց ՀԿԽԸ գլխավոր քարտուղար Աննա Եղիազարյանը:



Ավստրիացի իր գործընկերոջը ներկայացնելով Հայկական Կարմիր խաչի ընկերության այսօրվա գործունեությունը և անելիքները՝ Ա. Եղիազարյանը շնորհակալություն հայտնեց Ավստրիական Կարմիր խաչին՝ վստահության և ՀԿԽԸ ռազմավարական ուղղություններով իրականացվող ծրագրերին աջակցելու համար:

ԱԿԽ գլխավոր քարտուղարը նշեց, որ բարձր է գնահատում համագործակցությունը Հայկական Կարմիր խաչի ընկերության հետ, քանի որ ԱԿԽ աջակցությամբ իրականացվող ծրագրերն իրագործվում են բարձր մակարդակով ու արդյունավետությամբ:

- ՀԿԽԸ-ի հետ համագործակցությունը շարունակական կլինի և կընդլայնվի: Կարծում եմ մենք կաշխատենք մեր կապերն առավել ամրապնդելու համար, քանի որ երկուստեք ուղղում ենք մեր ջանքերը՝ ի բարօրություն մեր շահառուների և խոցելի համայնքների, - ասաց նա:

Այցի շրջանակներում Վերներ Կերշբաումը՝ ՀԿԽԸ գլխավոր քարտուղարի ուղեկցությամբ այցելեց Երևանի հանրակացարաններից



First Secretary of the Embassy of Japan Keisuke Yamagishi highly appreciated the work done, mentioning the quality of the renovation and furnishing:

"On behalf of the Government of Japan, I congratulate the new academic year in the new building. The Government of Japan continues the implementation of socio-economic development programs, which will strengthen the friendship between Armenia and Japan".

The children welcomed the guests with Armenian folk songs and dances, poetry; with wishes and words of gratitude in Japanese.

Concluding the official part of opening Governor of Ararat region Rubik Abrahamyan thanked the benefactors.

"Educational institutions have a strategic importance for our nation, they are our state cornerstones. Educated generation - strong statehood", he said.

## SECRETARY GENERAL OF THE AUSTRIAN RED CROSS DR. WERNER KERSCHBAUM VISITED ARMENIAN RED CROSS SOCIETY

On 8, September Dr. Werner Kerschbaum, Secretary General of Austrian Red Cross, visited the Armenian Red Cross Society Headquarters, where met with Dr. Anna Yeghiazaryan, ARCS General Secretary.

Having presented ARCS activities and plans to his colleague, A. Yeghiazaryan thanked the Austrian Red Cross for the confidence and support of ARCS projects, implemented in its strategic directions.

ARC Secretary General noted, that he highly appreciated cooperation with Armenian Red Cross Society, as ARC supported projects are implemented in a high level of efficiency.

"We will continue our cooperation with ARCS and, surely, it will be expanded. I think we will work on strengthening our ties, as we both direct our efforts for the benefit of our stakeholders and vulnerable communities", he said.

During the visit, Dr. Werner Kershbaum, accompanied by ARCS Secretary General visited one of Yerevan dormitories, where in the frame of "Psycho-social support for the elderly refugee" project young volunteers visit and help lonely elderly refugees. "Smiley club" project is also being implemented there, where the refugee children are involved.

ARC Secretary General talked with the project beneficiaries - children and elderly people, asked about their problems, desires and project efficiency. ARC Secretary General was particularly impressed by the conversation with Seda, 88-year-old woman, who, though blind and confined to bed, but managed to remember German classes and greeted her guest in German.

## THE BREATH OF SYRIAN-ARMENIAN CULTURE IN YEREVAN CHARITY FAIR- EXHIBITION

On 17 November, at the Government Conference Hall the "The Breath of Syrian-Armenian culture in Yerevan" Christmas Charity Fair opening ceremony took place. It was organized by the Ministry of Diaspora with the support of Armenian Red Cross Society and the "Center for Coordination of Syrian Armenians' issues" NGO.

This time, beneficiaries of Armenian Red Cross Society were also participating in the traditional exhibition. They have started income generating activities with the various tools and equipment they had received, and now have registered significant success.

Syrian-Armenian masters, such as, confectioners, goldsmiths and silversmiths. were presented their hand-made works, Syrian Armenians, who have established production in Armenia, including shoes, shampoo, etc., were also presenting their works.

մեկը, որտեղ իրականացվող «Սոցիալ-հոգեբանական ծառայություն փախստական ծերերին» ծրագրի շրջանակներում երիտասարդ կամավորներն այցելում են և օգնում միայնակ փախստական ծերերին: Այստեղ է գործում նաև «Ժպիտների ակումբը», որտեղ ներգրավված են փախստականների երեխաները:

ԱԿԽ գլխավոր քարտուղարը զրուցեց ծրագրում ներգրավված շահառուների՝ ծերերի ու երեխաների հետ, հետաքրքրվեց նրանց խնդիրներով, ցանկություններով ու ծրագրի արդյունավետությամբ: Նա հատկապես տպավորվեց 88-ամյա Սեդա տատիկի հետ զրույցից, որը թեև կույր էր ու գամված էր անկողնուն, բայց կարողացավ հիշել դեռ դպրոցում անցած գերմաներենի դասերն ու գերմաներենով ողջունեց իր հյուրին:

## «ՍԻՐԻԱՀԱՅ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՇՈՒՆՉԸ ԵՐԵՎԱՆՈՒՄ» ԱՄԱՆՈՐՅԱ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՑՈՒՑԱՀԱՆԴԵՍ-ՏՈՆԱՎԱՃԱՌ ԵՐԵՎԱՆՈՒՄ

Նոյեմբերի 17-ին, Կառավարության ընդունելությունների տանը տեղի ունեցավ «Սիրիահայ մշակույթի շունչը Երևանում» ամանորյա բարեգործական ցուցահանդես-տոնավաճառի բացումը: Այն կազմակերպվել էր ՀՀ Սփյուռքի նախարարության կողմից՝ Հայկական Կարմիր խաչի ընկերության և «Սիրիահայերի հիմնախնդիրները համակարգող կենտրոն» ՀԿ-ի աջակցությամբ:

Այս անգամ արդեն ավանդական դարձած ցուցահանդեսին մասնակցում էին նաև Հայկական Կարմիր խաչի ընկերության շահառուները, որոնք սեփական եկամտաբեր գործունեությունն սկսելու համար տարբեր գործիքներ են ստացել ու այժմ արդեն որոշ հաջողություններ ունեն այդ ոլորտում:

Իրենց աշխատանքներն էին ներկայացրել ձեռագործի սիրիահայ վարպետները, հրուշակագործներ, ոսկերիչներ ու արծաթագործներ: Իրենց ապրանքատեսակները ներկայացրել են նաև Հայաստանում արտադրություն հիմնած սիրիահայերը, այդ թվում՝ կոշիկի, շամպունի և այլն:

## ՄԵԿՆԱՐԿԵՑ «ԱՂԵՏՆԵՐԻ ՌԻՍԿԻ ՆՎԱԶԵՑՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ» ԾՐԱԳԻՐԸ



Հոկտեմբերի 13-ին՝ Աղետների նվազեցման միջազգային օրը, Երևանում մեկնարկեց «Աղետների ռիսկի նվազեցումը Հայաստանում» ծրագիրը: Այն իրականացնում են Հայկական Կարմիր խաչի ընկերությունը, ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի (ՅՈՒՆԻՍԵՖ) հայաստանյան գրասենյակը, ՕՔՍՖԱՄ Հայաստան և «Սեյվ դը չիլդրեն» կազմակերպությունները՝ ՀՀ արտակարգ իրավիճակների, Կրթության և գիտության, Աշխատանքի և սոցիալական հարցերի, Տարածքային կառավարման նախարարությունների և Աղետների ռիսկի նվազեցման ազգային պլատֆորմի հետ համագործակցությամբ:

Ծրագրի նպատակն է բարձրացնել բնական աղետներին ենթակա բնակավայրերում երեխաների և համայնքների դիմակայունությունը և դարձնել նրանց պակաս խոցելի: Ծրագիրը ֆինանսավորվում է Եվրոպական հանձնաժողովի մարդասիրական օգնության և քաղպաշտպանության հարցերով գլխավոր վարչության կողմից:

«Աղետների ռիսկի նվազեցումը Հայաստանում» ծրագիրը կիրականացվի Շիրակի, Լոռու, Արագածոտնի, Գեղարքունիքի, Վայոց ձորի, Տավուշի մարզերում և Երևանում: Միջոցառումները կիրականացվեն երեք հիմնական ուղղություններով՝

- տեղական համայնքների կարողության հզորացում առավել խոցելի բնակչության կարիքների բացահայտման ու արձագանքման գործում,
- խոցելի երեխաների (ներառյալ՝ հատուկ կարիքներով) իրավունքների արտացոլում ԱՌՆ քաղաքականության մեջ,

## "DISASTER RISK REDUCTION IN ARMENIA" PROJECT WAS LAUNCHED IN YEREVAN



On 13 October, the International Day for Disaster Reduction, "Disaster Risk Reduction in Armenia" project was launched. It is being implemented by the Armenian Red Cross Society, the UN Children's Fund (UNICEF) Armenia, Oxfam Armenia and "Save the Children", in the cooperation with the Ministry of Emergency Situations, the Ministry of Education and Science, the Ministry of Labor and Social Affairs, the Ministry of Territorial Administration and Disaster risk Reduction National Platform.

The project aims to raise the awareness and make less vulnerable children and communities in areas prone to natural disasters. Project is funded by the European Commission Humanitarian Aid and Civil Protection department.

"Disaster Risk Reduction in Armenia" will be implemented in Shirak, Lori, Aragacotn, Gegharkunik, Vayots Dzor and Tavush Regions and Yerevan. The project will be implemented in the following three main directions:

- Strengthening the capacity of local communities to identify and respond to the needs of the most vulnerable population.
- The reflection of rights of vulnerable children (including those with special needs) in DRR policy
- Capacity strengthening of children and schools in risk-sensitive areas for better protection, mitigation, and disaster response.

Taking into consideration the similarity of the projects being implemented by ARCS and OXFAM- Armenia, Edmon Azaryan, Head of Disaster Management and Population Movement Department together with Zaruhi Tonoyan, OXFAM Armenia organization DRR Projects Officer presented approaches used in the frames of projects implemented in the national, regional and community levels, achievements based on to the previous experiences and innovations contained therein.

## ARMENIAN RED CROSS SOCIETY WILL CONTINUE TO PROMOTE INTEGRATION OF SYRIAN ARMENIANS




On 18 December the EU Delegation to Armenia held an official ceremony for the signature of fifteen EU cooperation projects in Yerevan. New actions with a total budget of approximately 10 million Euro will support civil society and local authorities, as well as government reforms in Armenia.

The fifteen contracts are in various fields of bilateral and regional cooperation – from agriculture and rural development through human rights and democracy to poverty reduction and sustainable urban development.

In 2015-2016, by the finance of EU and with the support of Austrian Red Cross, Armenian Red Cross Society will implement Promoting Integration of Syrian Armenians project, with the budget of E 400 000.

- վտանգների հանդեպ զգայուն տարածքներում երեխաների և դպրոցների կարողությունների ամրապնդում՝ ավելի լավ պաշտպանված լինելու, մեղմացնելու և աղետներին արձագանքելու գործում:

Հաշվի առնելով ՀԿԽԸ և ՕՔՍՖԱՄ-Հայաստանի կողմից իրականացվող ծրագրերի նմանատիպ բնույթը՝ ՀԿԽԸ Աղետների կառավարման և բնակչության տեղաշարժի բաժնի վարիչ Էդմոն Ազարյանը՝ ՕՔՍՖԱՄ-Հայաստան կազմակերպության ԱՌՆ ծրագրերի մասնագետ Զարուհի Տոնոյանը միասին ներկայացրեցին ազգային, մարզային և համայնքային մակարդակում ծրագրերի շրջանակներում կիրառվող մոտեցումները, ձեռքբերումները նախորդ փորձի շնորհիվ ձևավորված և դրանում տեղ գտած նորարարությունները:

## ՀԿԽԸ-Ն ԿՇԱՐՈՒՆԱԿԻ ԽԹԱՆԵԼ ՍԻՐԻԱՀԱՅԵՐԻ ԻՆՏԵԳՐՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Դեկտեմբերի 18-ին Հայաստանում Եվրոպական միության պատվիրակության գրասենյակում տեղի ունեցավ համագործակցության տասնհինգ ծրագրերի ստորագրման արարողությունը: Մոտ 10 միլիոն եվրո ընդհանուր բյուջեով նոր ծրագրերի միջոցով ԵՄ-ն կաջակցի քաղաքացիական հասարակությանը և տեղական ինքնակառավարման մարմիններին, ինչպես նաև Հայաստանում կառավարման բարեփոխումներին:

Տասնհինգ պայմանագրերը երկկողմանի և տարածաշրջանային տարբեր ոլորտներից են՝ գյուղատնտեսությունից մինչև գյուղական համայնքների զարգացում, մարդու իրավունքներից և ժողովրդավարությունից՝ աղքատության նվազեցում և քաղաքային կայուն զարգացում:

2015-2016թթ. ԵՄ ֆինանսավորմամբ և Ավստրիական Կարմիր խաչի աջակցությամբ, Հայկական Կարմիր խաչի ընկերությունը կիրականացնի «Խթանելով սիրիահայերի ինտեգրումը» ծրագիրը, որին կտրամադրվի 400 000 եվրո:

## ՀԱՅԿԱԿԱՆ ԿԱՐՄԻՐ ԽԱՉԻ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆԸ՝ «ՄԱՐԴԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՀԵՐՈՍ»

Օգոստոսի 19-ին՝ Մարդասիրության համաշխարհային օրը, Լոռու մարզի Ստեփանավան քաղաքում կազմակերպված միջոցառման ժամանակ Հայկական Կարմիր խաչի ընկերությունը ՄԱԿ-ի հայաստանյան գրասենյակի կողմից ճանաչվեց «Մարդասիրության հերոս»:

«Մարդասիրության հերոս» ճանաչվեցին նաև «Սպիտակ» և «Լոռէ» փրկարարական ջոկատները, «Հույս տուն» բարեգործական կենտրոնը, «Առաքելություն Հայաստան» և «Առաքելություն Արևելք» կազմակերպությունները:

Այս տարվա Մարդասիրության համաշխարհային օրվա թեման էր «Աշխարհին ավելի մեծ կարիք ունի մարդասիրության հերոսների»: Դրա նպատակն է արժևորել և գնահատել ամբողջ աշխարհում հումանիտար ոլորտի աշխատողների ջանքերն ու ձեռքբերումները: Նրանց պատմությունները պատմելու, ամբողջ աշխարհում մարդկանց մարդասիրական ոգին բարձրացնելու, աշխարհի՝ մարդասիրական օգնության ծայրահեղ կարիք ունեցող թեժ կետերի մասին իրազեկելու նպատակով ստեղծվել է www.worldhumanitarianday.org կայքը:

2008թ. ՄԱԿ-ի ընհանուր վեհաժողովն օգոստոսի 19-ը հայտարարեց Մարդասիրության համաշխարհային օր՝ նշանավորելով 2003թ. նույն օրը Բաղդադում ՄԱԿ-ի կենտրոնական գրասենյակի ռմբակոծության ժամանակ զոհված 22 աշխատակիցների հիշատակը:

## ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԹԻՄԸ ՀԱՂԹԵՑ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱԶԳԱՅԻՆ ԴԱՏԱԽԱԶ-ՄՐՑՈՒՅԹՈՒՄ



## ARCS IS A "HUMANITARIAN HERO"

On 19 August, on the occasion of World Humanitarian Day, "Armenian Red Cross Society", was awarded certificate of acknowledgement as "Humanitarian Hero" by the UN office in Armenia at the event organized in Stepanavan city, Lori region.

This honor was also granted to "Spitak" and "Lore" Rescue Teams, "House of Hope" benevolent center, "Mission Armenia" and "Mission East".




In 2014, World Humanitarian Day theme was "The world needs more Humanitarian Heroes". Its purpose was to evaluate and assess the efforts and achievements of the humanitarian workers of the entire world. For telling their stories, for raising the humanitarian spirit of people worldwide and for the awareness of world hot spots that extremely need humanitarian aid www.worldhumanitarianday.org website was created.




In 2008 the UN General Assembly designated August 19 as World Humanitarian Day in commemoration of the bombing of the UN Headquarters in Baghdad in 2003, when 22 staff members lost their lives.

## FRENCH UNIVERSITY IN ARMENIA FOUNDATION TEAM WON THE IHL NATIONAL MOOT COURT COMPETITION, 2014



On 7 - 9 November, National Moot Court competition on International Humanitarian Law was held in Aghveran, where French University in Armenia Foundation team became the winner. The team was composed of

Նոյեմբերի 7-ից 9-ը Աղվերանում անցկացվեց Միջազգային մարդասիրական իրավունքի վերաբերյալ ազգային դատախաղ-մրցույթը, որտեղ հաղթող ճանաչվեց Հայաստանում ֆրանսիական համալսարան հիմնադրամի թիմը: Թիմի կազմում հանդես էին գալիս ԲՈՒՀ-ի իրավագիտության ֆակուլտետի ուսանողներ Կարինե Վարդանյանը, Յուրի Մելիք-Օհանջանյանը և Լիլիթ Մադաթյանը:

Դատախաղը բաղկացած էր 5 փուլից: Առաջին չորս փուլերին մասնակցում էին բոլոր 6 թիմերը՝ հայաստանյան հետևյալ բուհերի իրավագիտության ֆակուլտետներից՝ Երևանի պետական համալսարան, Հայաստանում Ֆրանսիական համալսարան հիմնադրամ, Հայ-ռուսական (սլավոնական) համալսարան, ՀՀ ՊՆ Ռազմական ինստիտուտ:

Այդ փուլերի արդյունքների համաձայն ժյուրին, որի կազմում ընդգրկված են իրավագիտության ոլորտում Հայաստանի առաջատար մասնագետներ, այդ թվում՝ ի.գ.թ. Վլադիմիր Վարդանյանը, ի.գ.թ. Լևոն Գևորգյանը, ի.գ.թ. Արամ Օրբելյանը, ի.գ.թ. Եղիշե Կիրակոսյանը, ի.գ.թ. Տարոն Սիմոնյանը և ԿԽՄԿ իրավաբան Իռեն Ալոյանը, ընտրեց երկու թիմ՝ Հայաստանում Ֆրանսիական համալսարան հիմնադրամի և Երևանի պետական համալսարանի թիմերը:

Եզրափակիչ փուլը տեղի ունեցավ նոյեմբերի 9-ին, որի արդյունքների համաձայն էլ հաղթող ճանաչվեց Հայաստանում ֆրանսիական համալսարան հիմնադրամի թիմը:

Հաղթողները, որպես պարգև ստացան Samsung Galaxy Tab 3 դյուրակիր համակարգիչներ (տաբլեթներ), մասնագիտական գրքեր, ինչպես նաև մրցույթի հաղթական գավաթը, որը հաղթող թիմին փոխանցեց նախորդ տարի հաղթանակ տարած՝ Հայ-ռուսական (սլավոնական) համալսարանի թիմը:

Եզրափակիչ անցած թիմերին հնարավորություն կտրվի նաև պրակտիկա անցնել ՀՀ Սահմանադրական դատարանում ու Միջազգային և համեմատական իրավունքի հայկական կենտրոնում:

ՄՄԻ դատախաղ-մրցույթը նպատակ ունի տեսական դասընթացների և գործնական առաջադրանքների միջոցով խթանել միջազգային մարդասիրական իրավունքի վերաբերյալ ապագա իրավաբանների հետաքրքրվածությունը և խորացնել նրանց գիտելիքները:

Մրցույթը կազմակերպել էր Հայկական Կարմիր խաչի ընկերությունը (ՀԿԽԸ)՝ Կարմիր խաչի միջազգային կոմիտեի (ԿԽՄԿ) աջակցությամբ և Միջազգային և համեմատական իրավունքի հայկական կենտրոնի (ՄՀԻՀԿ) հետ համատեղ:

## ՍԻՐԻԱՀԱՅ ԵՐԵԽԱՆԵՐԻ ԿԱՅՈՒՆ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՀԱՆԴԻՊՈՒՄ ՇԱՀԱԳՐԳԻՌ ԿՈՂՄԵՐԻ ՀԵՏ

Դեկտեմբերի 23-ին Հայկական Կարմիր խաչի ընկերության գլխավոր գրասենյակում տեղի ունեցավ «Սիրիահայ երեխաների կայուն զարգացումը Հայաստանում» ծրագրի ամփոփիչ հանդիպումը՝ ծրագրում ներգրավված 13 դպրոցների ուսուցիչների, ուսմասվարների հետ և այլ շահագրգիռ կողմերի հետ:

Ծրագրի մեկնարկից 3 ամիս անց կազմակերպված հանդիպման նպատակն էր քննարկել դրա արդյունքներն ու իրականացման ընթացքում հանդիպող դժվարությունները: Քննարկմանը ներկա էին նաև, ծրագրում ներգրավված ՀԿԽԸ կամավորները, դպրոցների աշակերտներն ու նրանց ծնողները:



ՀԿԽԸ Երիտասարդական բաժնի վարիչ Կատարինա Վարդանյանը ողջունեց ներկաներին՝ շեշտելով, որ նման հանդիպումները շատ կարևոր են՝ ծրագրի արդյունավետությունը գնահատելու և հետագա անելիքները պլանավորելու համար: Այնուհետև, ծրագրի գործունեության համակարգող Հեղինե Պողոսյանը ներկայացրեց, թե ինչ է արվել այս երեք ամիսների ընթացքում և թե ինչ է արվելու:

Դրանից հետո խոսքը փոխանցվեց արդեն «Սիրիահայ երեխաների կայուն զարգացումը Հայաստանում» ծրագրի շահառու հանդիսացող դպրոցների ներկայացուցիչներին ու ծնողներին:

Law Faculty students: Karine Vardanyan, Yuri Melik-Ohanjanyan and Lilit Madatyan.

The Moot Court Competition consisted of 5 rounds: during the first four rounds all 6 teams from Law faculties of Armenian Universities were participating: Yerevan State University, French University in Armenia Foundation, Russian-Armenian (Slavonic) University and RA Military Institute named after V.Sargsyan.

According to the results of the rounds, the Jury, comprised of Armenian leading experts in the field of Law, including Dr. Vladimir Vardanyan, PhD, Dr.Levon Gevorgyan, PhD, Dr.Aram Orbelyan, PhD, Dr. Yeghishe Kirakosyan, PhD, Dr. Taron Simonyan, PhD and ICRC Lawer Iren Aloyan, chose two teams representing French University in Armenia Foundation and Yerevan State University to compete for the Prize.

The final round was held on 9 November, and the French University team was awarded the first place.

The winners received Samsung Galaxy Tab 3 Tablets, professional books, as well as the Cup of the competition; which was given to the winning team by the team of Russian-Armenian (Slavonic) University, as they were the winners in last year Competition.

The Finalists will be given the opportunity to practice in the Constitutional Court and in the International and Comparative Law Center.

IHL Moot Court Competition aims to promote the interest of future lawyers on International Humanitarian Law and deepen their knowledge through theoretical courses and practical exercises.

Moot Court Competition on International Humanitarian Law was organized by the Armenian Red Cross Society (ARCS) with the support of the International Committee of Red Cross (ICRC) and with the cooperation of International and Comparative Law Center (ICLAW).

## SYRIAN ARMENIAN CHILDREN RESILIENCE PROGRAM IN ARMENIA MEETING WITH THE STAKEHOLDERS

On 23 December, in Armenian Red Cross Society Headquarters "Syrian Armenian Children Resilience program in Armenia" project summarizing meeting was held, with the participation of school teachers, school counselors and other interested parties involved in the project.



The aim of the meeting, organized 3 months after the launch of the project, was to discuss the results and the difficulties encountered during its implementation. ARCS volunteers, pupils and their parents were also involved in the discussion.

Having welcomed the participants, Katarina Vardanyan, Head of ARCS Youth Department, stressed that such kind of meetings are very important for evaluation of the program effectiveness and planning future actions.



Then, program coordinator Heghine Poghosyan presented implemented works done in these three months and future plans.

After that, "Syrian Armenian Children Resilience program in Armenia" project beneficiaries, representatives of schools and parents were given the opportunity to express their opinion.

Շիրվանզադեի անվ. դպրոցի ներկայացուցիչ Հռիփսիմե Վարդանյան.

- Երեխաները շատ մեծ հաճույքով են հաճախում դասընթացներին, ծնողներից էլ դրական արձագանքներ ենք ստանում այն մասին, որ երեխաները փոխվել են, ավելի ուրախ են դարձել:

Թամար Ուզուրյան, ծնող.

- Տղաս շատ սիրով է գնում դասերին, ընկեր Անիին շատ է սիրում: Ամառային ճամբարին էլ է մասնակցել ու շատ գոհ է: Սկզբում այստեղ չէր հարմարվում, ասում էր ուզում եմ հետ գնալ, բայց հիմա, այս դասընթացների շնորհիվ, ասում է, որ ուզում է այստեղ հաստատվել ու մնալ: Արդեն տեղացի ընկերներ էլ ունի:

Հանդիպմանը ներկա մյուս դպրոցների ներկայացուցիչները շնորհակալություն հայտնեցին, իրենց խոսքերով, գեղեցիկ ծրագրի համար, որով ՀԿԽԸ-ն աշխատում է դպրոցների հետ՝ նշելով, որ կամավորները շատ պատրաստված են, պատրաստակամ ու հաճույքով են աշխատում երեխաների հետ: Դժվարությունների մասին խոսելիս, նշվեց հատկապես լեզվի հարցը՝ սիրիահայ երեխաները դժվար են հասկանում արևելահայերենը: Ընդհանուր առմամբ, դպրոցական անձնակազմի ու ծնողների կարծիքով, ծրագիրը պահանջված է ու ճիշտ ժամանակին է իրականացվում:

Հանդիպման երկրորդ մասում ծրագրի գործունեության համակարգող Նազելի Կիրակոսյանը ներկայացրեց սիրիահայ երեխաների կարիքները պարզելու նպատակով արված ելակետային հետազոտության արդյունքները: Միջոցառման ավարտին դասընթացների մասնակիցներն ու կամավորները հավաստագրեր ստացան:

Հայկական Կարմիր խաչի ընկերությունը՝ Դանիական Կարմիր խաչի հետ համագործակցությամբ, ս.թ. օգոստոսից իրականացնում է «Սիրիահայ երեխաների կայուն զարգացումը Հայաստանում» ծրագիրը, որը կտևի մեկ տարի: Ծրագիրը մշակված է Կարմիր խաչի/Կարմիր մահիկի Ազգային ընկերությունների ֆեդերացիայի (ԿԽՄՖ) և Սեյվ դը Չիլդրեն հիմնադրամի կողմից համատեղ մշակված մեթոդի հիման վրա: Ծրագրի նպատակն է աջակցել Հայաստանում սիրիահայ երեխաների ինտեգրման գործընթացին և կայուն զարգացմանը:

Կազմակերպչական ծավալուն աշխատանքներից հետո՝ ս.թ. նոյեմբերից, Երևանի թվով 13 դպրոցներում կազմակերպվում են ծրագրով նախատեսված ինտերակտիվ պարապմունքները՝ սիրիահայ և տեղացի երեխաների մասնակցությամբ: Երեխաները պարապմունքներին մասնակցում են մինչև 18 անձից բաղկացած խմբերով և ոչ ֆորմալ մեթոդներով՝ դերախաղեր, քննարկումներ, նկարչություն, պար և այլն, անդրադառնում այնպիսի խնդիրների, ինչպիսիք են վախի և սթրեսի հաղթահարում, շրջակա միջավայրի ճանաչում, ապագայի կառուցում և այլն:

## ՀԿԽԸ ԱՌԱՋԻՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԿԱՄԱՎՈՐԱԿԱՆ ԽՄԲԵՐԻ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ՄՐՑՈՒՄՆԵՐ ԻՋԵՎԱՆՈՒՄ

Հոկտեմբերի 18-ին ՀԿԽԸ Առաջին օգնության կամավորական խմբերի տարածաշրջանային մրցումներ անցկացվեցին Իջևանում, որին մասնակցում էին կամավորական թիմեր սահմանամերձ Այգեհովիտ, Բերդավան, Այգեձոր, Արծվաբերդ գյուղերից, ինչպես նաև Իջևանից, որը ներկայացնում էին «Սոս մանկական գյուղերի» սաները:

Այդ թիմերը ձևավորվել էին ՀԿԽԸ Առաջին օգնության ուսումնամեթոդական կենտրոնի կողմից հուլիսից սեպտեմբեր ամիսներին անցկացված "Առաջին օգնության հիմունքների" դասընթացների արդյունքում: Այդ դասընթացների նպատակն է սահմանամերձ առավել խոցելի Տավուշի մարզում զարգացնել բնակչության առաջին օգնության գիտելիքներն ու հմտությունները:

Մասնակիցների՝ Առաջին օգնության հմտություններն ստուգելու համար նախապատրաստվել էր 4 կայան, որտեղ ներկայացված էին տարբեր դեպքեր՝ օտար մարմին, ուժեղ արյունահոսություն, շոկ, գլխի վնասվածք, գիտակցության կորուստ, որովայնի փակ վնասվածք և կոտրվածք: Մրցավարները Հայկական Կարմիր խաչի ընկերության ԱՕ հրահանգիչներն էին:



Hripsime Vardanyan, Representative of Al. Shirvanzade school: "Children attend classes with great pleasure, and also we have positive feedback from parents, they mention, that the kids' behavior has changed and they are more cheerful now".

Tamar Uzuryan, parent: "My son is very happy, while going to the classes; he likes Ani (volunteer) very much. He also participated in summer camp with great pleasure. At first he was not getting well here, he asked us to go back, but now, thanks to these courses, he says, that wants to settle down here now. He has already friends from locals".

Other participants of the meeting, thanked the ARCS, for such a wonderful project, implemented in schools, noting that volunteers are trained, well prepared and willing to work with children.

Language issue was mentioned as the one of the main difficulties, as many Syrian-Armenian children do not understand Eastern Armenian.

In general, in the opinion of school staff and parents, the program was relevant and timely.

In the second part of the meeting, program coordinator Nazeli Kirakosyan presented the results of the survey, which had been conducted to identify the needs of Syrian-Armenian children.

At the end of the meeting participants and volunteers received certificates.

Armenian Red Cross Society, in cooperation with the Danish Red Cross, implements "Syrian Armenian Children Resilience program in Armenia" project starting from August, 2014. The project was designed based on the method developed jointly by RC/RC Federation (IFRC) of National Societies and Save the Children Fund. The project aims to support the integration and resilience of Syrian-Armenian children.

After extensive organizational works, starting from November, 2014 in 13 schools of Yerevan interactive trainings have been organized with the participation of Syrian-Armenian and local children.

Children take part in the sessions up to 18 member in a group with non-formal methods such as role plays, discussions, drawing, dancing, etc., addressing such issues as overcoming fear and stress, studying environment, future plans and etc.

## ARCS FIRST AID VOLUNTEER TEAMS REGIONAL COMPETITION IN IJEVAN

On 18 October, ARCS First Aid Volunteer Teams Regional Competition took place in Ijevan. Participants were volunteer teams from borderline Aygehovit, Berdavan, Aygedzor, Artsvaberd villages, also team from Ijevan represented by "Soschildren's village" pupils.

These teams were formed by ARCS First Aid Training Center, as a result of "First Aid Basics" course, which were conducted from July to September 2014. The aim of these courses was to develop First Aid knowledge and skills of people from more vulnerable borderline Tavush region.

To examine First Aid skills of the participants 4 stations were organized, where different cases were presented. Foreign body, heavy bleeding, shock, head injury, faint, closed abdominal trauma and fracture. Referees were ARCS FA instructors. The teams, which were mainly formed from teenagers, approached the work with great responsibility and enthusiasm and did their best to show the knowledge and skills gained from the course. Even drizzle didn't interfere in their warm talking with ''the victims suffering from pain'', or ''in shock'', applying a bandage and trying to stop the bleeding.

As a result of the hot struggle, the team from Ijevan became the winner. "Sos children's village" pupils' excitement had no borders, because the winning team will participate in the FA National Competition.Berdavan and Aygedzor shared the second place, Aygehovit and Artsvaberd shared the 4th place.

On 24 August, First Aid Volunteer Teams Regional Competition took place in Yerevan. 2 teams from Yerevan, 2 teams from Ashtarak, groups from Armavir, Yeghegnadzor, Vanadzor, Vardenis, as well as one team from Georgia participated in the Competition.



Թիմերը, որոնք կազմված էին հիմնականում պատանիներից, մեծ պատասխանատվությամբ ու ոգևորությամբ էին մոտեցել առաջադրանքին ու ջանում էին առավելագույնս ցուցադրել դասընթացների ժամանակ ձեռք բերած իրենց գիտելիքներն ու հմտությունները: Նույնիսկ թեթև անձրևը չխանգարեց, որ նրանք հոգատարությամբ զրուցեն «ցավից տառապող» կամ «շոկի» մեջ ընկած «տուժածների» հետ, վիրակապեն կոտրվածքն ու փորձեն կանգնեցնել «արյունահոսությունը»:

Թեժ պայքարի արդյունքում հաղթող ճանաչվեց Իջևանի թիմը: «Սոս մանկական գյուղերի» սաների ոգևորությունը սահման չուներ, քանի որ հաղթող թիմը մասնակցելու է ԱՕ հանրապետական մրցումներին:

Երկրորդ տեղը կիսեցին Բերդավանն ու Այգեձորը, իսկ Այգեհովիտն ու Արծվաբերդը՝ չորրորդ տեղը:

Օգոստոսի 24-ին ՀԿԽԸ Առաջին օգնության կամավորական խմբերի տարածաշրջանային մրցումներ էին անցկացվել Երևանում, որին մասնակցում էին 2 թիմ Երևանից, 2 թիմ Աշտարակից, խմբեր Արմավիրից, Եղեգնաձորից, Վանաձորից, Վարդենիսից, ինչպես նաև 1 թիմ՝ Վրաստանից:

Մասնակիցների՝ Առաջին օգնության հմտություններն ստուգելու համար նախապատրաստվել էր 4 կայան, որտեղ ներկայացված էին տարբեր դեպքեր: 1-ին տեղը գրավեց Վանաձորի թիմը, 2-րդ տեղում Վայոց ձորն էր, իսկ 3-րդ տեղը կիսեցին Աշտարակ 2 և Երևան 2 թիմերը:

Միջոցառումներն անցկացվել են ՀԿԽԸ և ԿԽՄԿ համագործակցության ծրագրերի շրջանակներում:

## ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՀԱՄԱԽՄԲՈՒՄ և ՈՒԺԵՂԱՑՈՒՄ

Հայկական Կարմիր խաչի ընկերությունը՝ ՄԱԿ-ի փախստականների հայաստանյան գրասենյակի ֆինասավորմամբ իրականացվող «Փախստակաների ընդունում և ինտեգրում» ծրագրի շրջանակներում 2014 թ. իրագործեց «Համայնքների համախմբում և ուժեղացում» բաղադրիչը: Ծրագրի շրջանակներում ընտրվեց 5 համայնք, որտեղ նաև փախստականներ են ապրում: Դրանք էին Արագածոտնի մարզի Աշտարակ քաղաքը, Տավուշի մարզի Բագրատաշեն գյուղը, Արարատի մարզի Դարբնիկ գյուղը, Կոտայքի մարզի Աբովյան քաղաքը և Երևանի Նոր-Նորք վարչական շրջանը: «Համայնքների համախմբում» բաղադրիչի շրջանակներում Հայկական Կարմիր խաչի ընկերությունը քաղաքապետարաններում և համայնքային կենտրոններում հանդիպումներ կազմակերպեց բնակիչների, այդ թվում նաև փախստականների հետ՝ ՄԱԿ ՓԳՀ-ի աշխատակիցների մասնակցությամբ: Հանդիպման ընթացքում քննարկվեցին համայնքների կողմից բարձրացված հիմնախնդիրները և քվեարկության միջոցով առանձնացվեցին առավել կարևորները, ընտրվեցին քաղաքացիական ակտիվ խմբի անդամներ, ովքեր բարձրացված հիմնախնդիրները պետք է ներկայացնեին ծրագրի տեսքով՝ դրամաշնորհ ստանալու համար: Հայկական Կարմիր խաչի ընկերությունը յուրաքանչյուր համայնքում քաղաքացիական ակտիվ խմբերի համար հատուկ դասընթաց անցկացրեց, որի շնորհիվ նրանք սովորեցին ծրագրային գրագետ առաջարկ գրելու նրբությունները:

Արդյունքում համայնքները հանդես եկան իրենց ծրագրային առաջարկներով: ՀԿԽԸ-ի և ՄԱԿ ՓԳՀ-ի մասնակցությամբ ձևավորված հանձնաժողովն ընտրեց 5 առաջարկ՝ Աշտարակի «Ճանաչեք մեր բնօրրանը», Բագրատաշենի «Փողոցների լուսավորություն», Դարբնիկի՝ «Դպրոցի և մանկապարտեզի ցանկապատում», Աբովյանի «Էներգետիկ քոլեջի հանրակացարանի ջրի և կոյուղու խողովակատար համակարգի վերանորոգում», Նոր-Նորքի «Մարզահրապարակի կառուցում» ծրագրերը: Քաղաքապետարանների ու համայնքապետարանների, Հայկական Կարմիր խաչի ընկերության և ՄԱԿ ՓԳՀ-ի սերտ համագործակցության արդյունքում Աշտարակում ձեռք բերվեցին և տեղադրվեցին տների համարների և փողոցների անվանատախտակներ, պատմամշակութային հուշարձանների և քաղաքի հատակագծի տեղեկատվական տախտակներ, Բագրատաշենում լուսավորվեց 3 փողոց, Աբովյանի Էներգետիկ քոլեջի հանրակացարանում վերանորոգվեցին ջրի և կոյուղու խողովակատար համակարգերը:

## ԺՊԻՏՆԵՐԻ ԱԿՈՒՄԲԸ «ՄԵԳԵՐՅԱՆ ԿԱՐՊԵՏՆԵՐ» ԳՈՐԾԱՐԱՆՈՒՄ



4 stations were prepared to check First Aid skills of participants As a result, Vanadzor team took the 1st place, Yeghegnadzor took the 2nd place and Yerevan 2 and Ashtarak 2 teams shared the 3rd place.

The events were organized within the frames of ARCS and ICRC cooperation.

## COMMUNITY MOBILIZATION AND ENHANCEMENT

Armenian Red Cross Society, with the finance of UNHCR in the frames of “Refugee reception and integration” project, started to implement the “Community mobilization and enhancement” component. In the frames of the project, 5 communities were selected, where refugees are settled: Ashtarak city, Aragatsotn region, Abovyan city, Kotayq region, Darbnik Community, Ararat region and Nor-Nork administrative district, Yerevan city.




In the frame of “Community mobilization and enhancement” component Armenian Red Cross Society organized community meeting in Municipalities and Community Centers with the participation of the residents, including refugees, and UNHCR. During the meeting they discussed the issues raised by the communities, and the most important ones were chosen through voting. Active civic group members have been elected at the meeting, to submit the issues raised by the communities into a project form to receive grants. Armenian Red Cross Society conducted special training session for the active civic groups, where they obtained skills of project proposal writing.

As a result, the communities suggested the following proposals: “Explore our hometown”, Ashtarak city, “School and kinder garden fencing”, Darbnik community, “Renovation of Water and Sanitation systems of Energetic college dormitory”, Abovyan city, “Gym building”, Nor-Nork administrative distinct.

In close cooperation with Municipalities and Community Centers, ARCS and UNHCR, nameplates with the numbers of houses and the names of the streets, as well as information boards of historical and cultural monuments and the City’s master plan have benn installed in Ashtarak, street lamps have been placed in three streets of Bagratashen, Water and Sanitation systems of Energetic college dormitory have been renovated in Abovyan.

## SMILEY CLUB IN "MEGERIAN CARPET" FACTORY



On Saturday, October 18th, another great event was organized for the children from Smiley Club. They visited “Megerian Carpet” factory which also includes a museum of ancient carpets. Children got acquainted with all the stages of making a real Armenian carpet.

They learned how natural colors are made; they saw and tried themselves to make a carpet, they saw a 400-year-old carpet, they learned about a lot of tricks for making a high-quality carpet. The event was very engaging.

To the guide’s question “Shall we go on to the other rooms?” the answer was negative, since everybody was so attracted and engaged in making the knits of the carpet. Children asked a lot of questions, so it happened so that the excursion did not only comprise interesting facts about carpet-

Հոկտեմբերի 18–ին «Ժպիտների ակումբ» ծրագրի շրջանակներում կազմակերպվել էր հերթական միջոցառումը Երևանի ծայրամասերում բնակվող երեխաների համար: Նրանք այցելել էին «Մեգերյան կարպետներ» գորգերի գործարան- թանգարան: Օրը շատ օգտակար և հետաքրքիր էր: Երեխաները ծանոթացան բնական ներկեր ստանալու եղանակներին, գորգ պատրաստելու բոլոր փուլերին, ինքնուրույն գործեցին, այցելեցին հնագույն գորգերի թանգարան, սովորեցին գորգում օգտագործվող տարբեր հնարքները և այլն:

Նրանք այնքան էին գերվել ինքնուրույն գործելով, որ էքսկուրսավարի հարցին`«Շարունակե՞նք էքսկուրսիան», պատասխանեցին` Ոչ, քանի որ ավելի երկար էին ցանկանում մնալ և գործել:

Այդ օրը երեխաները ծանոթացան ոչ միայն գորգագործության արվեստի նրբություններին, այլև` Հայոց պատմությանը, հայ մշակույթին, հայկական ինքնությանն ու ազգային ժառանգությանը:

## ԼՈՒՍԱԲԱՆՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ ԱՐՄԱՎԻՐԻ ԳԵՏԱՇԵՆԻ ԴՊՐՈՑՈՒՄ և ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ "ԳՈՒԳԱՐՔ" ՃԱՄԲԱՐՈՒՄ

Օգոստոսի 21-ին Արմավիրի մարզի Գետաշեն գյուղի դպրոցում ՀԿԽԸ մարզային մասնաճյուղի կողմից կազմակերպվել էր լուսաբանման միջոցառում` աշակերտների և ուսուցչական անձնակազմի համար:

Դպրոցի տարածքում, որտեղ Արևմտյան Հայաստանի գավառների անուններով կարասներ էին տեղադրված, դրանցից մի քանիսը հենց այնտեղից էլ բերվել են անցյալ դարասկզբին:

Գետաշենի դպրոցականները հնարավորություն ունեն իրենց սեփական միրգն ու բանջարեղենը մշակել, որոնք անմիջապես ճաշարան են ուղարկվում` ապահովելով նրանց առողջ սնունդը: Դպրոցն ունի նաև թոնիր: ՀԿԽԸ Արմավիրի մարզային մասնաճյուղի լուսաբանման կամավորը ներկայացրեց ու մեկնաբանեց Կարմիր խաչի միջազգային շարժման պատմությունը, սկզբունքները, խորհրդանշաններն ու այսօրվա գործունեությունը: Այնուհետև մասնաճյուղի Առաջին օգնության կամավորները հանդես եկան ցուցադրական ելույթով` ներկայացնելով առաջին օգնության հիմունքները ուշագնացության, կոտրվածքի ու այրվածքի ժամանակ:

Ելույթներից հետո երեխաները` Կարմիր խաչի կամավորների ու աշխատակիցների հետ քննարկեցին այսօր աշխարհի թեժ կետերում Կարմիր խաչի մարդասիրական գործունեությունը, հարցեր տվեցին Առաջին օգնության սկզբունքների վերաբերյալ:

***

Հունիս, հուլիս, օգոստոս ամիսներին ՀԿԽԸ Լոռու մարզայի մասնաճյուղը կազմակերպել է «ԿԽ/ԿՄ Միջազգային շարժում, ՄՄԻ, ՀԿԽԸ և ՄՄ գործունեություն» թեմայով 7 սեմինար` 161 երիտասարդների, պատանիների և միջին տարիքի մարդկանց համար:

Հատկապես տպավորիչ էր 20.08.2014 թ.-ին Լոռու մարզի «Գուգարք» մանկական ճամբարում իրականացված լուսաբանման սեմինարը, որին մասնակցեցին նաև Հայաստանի և Ադրբեջանի միջազգային սահմանին ընկած Տավուշի մարզի Չինարի գյուղի այդ պահին այնտեղ հանգստացող սահմանամերձ 20 պատանիներ և երիտասարդներ:

Իր դիրքի և անվտանգության հետ կապված խնդիրների համար, գյուղը Կարմիր խաչի միջազգային կոմիտեի (ԿԽՄԿ) հայաստանյան պատվիրակության ուշադրության կենտրոնում է: Կազմակերպությունն ընդլայնել է իր աջակցությունը Չինարիի բնակչությանը` բավարարելու նրանց ամենածայրահեղ սոցիալ-տնտեսական կարիքները: ԿԽՄԿ առաքելության և գործունեության վերաբերյալ` Չինարիի երեխաների իրազեկվածությունը բարձրացնելու նպատակով, ՀԿԽԸ-ն նրանց տրամադրեց տեղեկատվական նյութերը ու պատմեց այդ կազմակերպության մասին, որի մեքենաները նրանք հաճախ են տեսնում իրենց գյուղում ու դրա շրջակայքում:

ՄՄԻ վերաբերյալ լուսաբանող թեմաների վրա: Չնայած, որ երեխաները հաճախակի են տեսել ԿԽՄԿ մեքենաներն իրենց գյուղում, բայց լավ չէին պատկերացում, թե արդյոք որն է ԿԽՄԿ պատվիրակների այնտեղ լինելու նպատակը:

Երեխաներին ներկայացվեց ԿԽՄԿ առաքելությունը և գործունեությունը Հայաստանում: Սեմինարի վերջում երեխաներին բաժանվեցին ԿԽՄԿ-ի օրացույցներ և բուկլետներ ԿԽՄԿ գործունեության վերաբերյալ:

Օրացույցները թերթելիս երեխաները հաճելիորեն զարմացան օրացույցի մեջ տպագրված լուսանկարներում գտնելով իրենց համագյուղացիներին և նույն լուսանկարներից տեղեկացան իրենց գյուղում ԿԽՄԿ կողմից իրականցված ծրագրերի մասին:

making history but also about overall Armenian culture, history, Armenian identity and national heritage.

## DISSEMINATION EVENTS IN GETASHEN SCHOOL, ARMAVIR AND "GUGARQ" CAMP, LORI

On 21 August, in the Getashen village school of Armavir region dissemination event was organized for the pupils and the teachers by the ARCS Armavir Regional branch.

In the school area, jars with the names of the Western Armenian provinces were placed, some of them were brought from there in the beginning of the last century. Pupils in Getashen School have an opportunity to grow their own fruits and vegetables, which are sent directly to the cafeteria, providing them with healthy food. The school has also a traditional oven (tonir) to have for freshly baked bread every day.



ARCS Armavir Regional branch dissemination volunteer presented and explained the history, Fundamental Principles, emblems and today's activities of the International Red Cross Movement. Then First Aid volunteers of the branch demonstrated the First Aid basics in the case of fainting, fractures and burn.



After the presentation, children discussed  Red Cross's humanitarian activities in the world's hot spots with the Red Cross volunteers and staff, as well as asked questions about the First Aid.

***

In June, July and August, 7 seminars on "RC/RC International Movement, IHL, ARCS and Regional Branch activities" for 161 young people, teenagers and others were organized by ARCS Lori Regional Branch.

One of those held on 20 August, in "Gugark" children's camp was especially impressive, as participants were 20 young people from the Chinari village of Tavush region, located close to the frontline along the international border between Armenia and Azerbaijan.

For its location and security issues, this village has been in focus of the International Committee of the Red Cross (ICRC) Delegation in Armenia. The organization has been extending its assistance to the population of Chinari by addressing some of their most urgent socioeconomic needs. To reinforce their awareness about the ICRC's mandate and activities, the ARCS provided the children of Chinari with information materials and told about the organization whose vehicles can often be seen touring their village and its whereabouts.